ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» ապրիլի 2017թ. N 102-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 26-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2017 թվականի ապրիլի 12-ի
N 102-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման հարցում աջակցմանը, հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելն է:

2. Ծրագրի ավարտը սահմանել 2017 թվականի դեկտեմբերի 10-ը:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը՝

1) պայմանագրային հիմունքներով մատակարարին տրամադրելու է 1 լիտր դիզելային վառելանյութի դիմաց 55 դրամ սուբսիդիա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխան 5000000 լիտր դիզելային վառելանյութ վաճառելու համար.

2) Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից լրացված և հաստատված N 1 ձևը, որպես հայտ էլեկտրոնային փոստով տրամադրում է համապատասխան դիզելային վառելանյութը մատակարարող կամ բաշխումն իրականացնող կազմակերպությանը,

3) էլեկտրոնային փոստով մարզպետարաններից ստանում է տեղեկատվություն մարզերում իրացված դիզելային վառելանյութի քանակների մասին՝ ըստ հողօգտագործողների.

4) մատակարար կազմակերպությունից էլեկտրոնային փոստով տեղեկատվություն է ստանում՝ ըստ մարզերի իրացված դիզելային վառելանյութի քանակների մասին.

5) ծրագրի իրականացման ընթացքի մասին՝ ըստ անհրաժեշտության, տեղեկատվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ.

6) ծրագրի ավարտից և մատակարարների կողմից հաշվետվությունները ստանալուց հետո մինչև 2018 թվականի փետրվարի 1-ն ամփոփ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

4. Նախատեսված 5000000 լիտր դիզելային վառելանյութի վաճառքն իրականացվում է՝ համաձայն N 1 աղյուսակի՝ հետևյալ չափանիշներով՝

1) գյուղացիական տնտեսություններին՝ մարզպետարանների հսկողությամբ, ելնելով հողօգտագործողի կողմից մշակվող հողատարածքի չափից՝ 1 հեկտարի համար մինչև 200 լիտր նորմայով, առավելագույն քանակը սահմանելով 600 լիտր.

2) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների հսկողությամբ՝ գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով համատեղ գործունեության պայմանագիր կնքած անձանց և 2016 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1001-Ն որոշմամբ հողօգտագործողներին հատկացված աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացուներից ստացված էլիտային վերարտադրության սերմացուներ ձեռք բերած շահառուներին՝ ըստ փաստացի մշակվող հողատարածքի չափի՝ 1 հեկտարի համար մինչև 200 լիտր նորմայով.

3) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի Հանրապետության ագրարային համալսարանի գիտական կենտրոնների և կազմակերպությունների համար ելնելով փաստացի մշակվող հողատարածքի չափից ներկայացված պահանջարկի հիման վրա՝ համաձայն N 1 աղյուսակի.

5. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝

1) հիմք ընդունելով համայնքներում 2016 թվականին փաստացի մշակված հողատարածքները և 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար ծրագրի աղյուսակով սահմանված մարզին հատկացվող դիզելային վառելանյութի քանակները, համապատասխան համայնքի ղեկավարի կողմից պահանջվող դիզելային վառելանյութի քանակի համար վճարումը հավաստող վճարման անդորրագրի պատճենը

և վճարում կատարած հողօգտագործողների ցուցակը՝ N 2 ձևը, N1 ձևի հետ միասին ծրագրի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացնում են նախարարություն:

2) իրականացնում են ծրագրի 16-րդ կետով իրենց վերապահված աշխատանքները,

3) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են դիզելային վառելանյութ գնել ցանկացող հողօգտագործողներից ծրագրով նախատեսված գնով գումարների հավաքագրումը,

4) իրականացնում են սույն ծրագրի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով իրենց վերապահված աշխատանքները.

5) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են ծրագրի շրջանակներում համայնքներում դիզելային վառելանյութ գնած հողօգտագործողների ցուցակների հավաքագրումը՝ համաձայն N 2 ձևի, պահպանությունը և այդ ցուցակների տրամադրումը նախարարությանը՝ տեղեկատվությանը տիրապետելու, ուսումնասիրություն և հսկողություն իրականացնելու համար,

6) ապահովում են ծրագրի ավարտից հետո 15-օրյա ժամկետում ծրագրի շրջանակներում մարզի համայնքների համար նախատեսված, փաստացի վաճառված դիզելային վառելանյութ քանակի և հողօգտագործողների մասին տեղեկատվության հավաքագրումը և հաստատումը՝ համաձայն N 3 ձևի, մեկական օրինակ տրամադրելով նախարարությանը:

7) ապահովում են հավաքագրված գումարների փոխանցումը մատակարարի բանկային հաշվեհամարին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության համապատաս-խան մարզպետի և մատակարարի միջև կնքված պայմանագրի.

8) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են պարատանյութերի տրամադրումը վճարում կատարած հողօգտագործողներին.

7. համայնքների ղեկավարները հողօգտագործողներից դիզելային վառելանյութի դիմաց հավաքագրված գումարների հավաքագրումը և լրացումը համաձայն N 2 ձևի իրականացնում են ամբողջական՝ ըստ համայնքի (բացառելով մաս-մաս ներկայացումը) և վճարում մատակարարների համապատասխան հաշվեհամարներին, նշելով համայնքը և հողօգտագործողի տվյալները:

8. Մատակարարը պարտավոր է՝

1) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներկրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ

հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխան 5000000 լիտր դիզելային վառելանյութ և սահմանված գնով վաճառել Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների հողօգտագործողներին.

2) Հայաստանի Հանրապետություն ներկրած դիզելային վառելանյութի որակը հավաստելու համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դրա լաբորատոր փորձաքննության եզրակացությունները.

3) դիզելային վառելանյութի վաճառքն իրականացնել համայնքների ղեկավարների միջոցով՝ համաձայն մարզպետների կողմից լրացված և հաստատված N 1 ձևի ու դիզելային վառելանյութի համար վճարում կատարած հողօգտագործողների ցուցակների՝ համաձայն N 2 ձևի.

4) դիզելային վառելանյութի վաճառքն իրականացնել պայմանագրով սահմանված գնով.

5) ստուգել և անճշտություններ չհայտնաբերելու դեպքում հաստատել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից հաստատված N 3 ձևը և պատճենը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ որպես ծրագրի կատարման մասին հաշվետվություն.

6) ներկայացված N 3 ձևում անճշտություններ հայտնաբերելու դեպքում տեղեկատվություն ներկայացնել համապատասխան մարզպետարան՝ ճշտումներ կատարելու համար.

7) համայնքների հողօգտագործողներից փաստացի հավաքագրված գումարների դիմաց դիզելային վառելանյութը մատակարարել համապատասխան համայնք՝ համայնքի ղեկավարի հետ կազմելով դիզելային վառելանյութի հանձնման-ընդունման երկկողմանի հաստատված ակտ՝ համաձայն N 4 ձևի.

8) Հայաստանի Հանրապետության մարզերում դիզելային վառելանյութի վաճառքը ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել՝

1) ծրագրի կատարման մասին հաշվետվություն,

2) ֆինանսական հաշվետվություն:

9. Ծրագրի ընթացքի վերահսկողությունն իրականացնում է Նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչությունը գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների հետ համատեղ, հսկողությունը՝ համապատասխան մարզպետարանները, իսկ մոնիթորինգը՝ Նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունը:

10. Նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության, ինչպես նաև գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունների կողմից կատարված՝ համապատասխանաբար վերահսկողության և մոնիթորինգի արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին: